

յու այդ ցնցող և ազդեցիկ գրիւր: « Revue des Rouves » գաղղ. պատուաւոր համըսի իմրագիրն ծանօթացոյ իւր յայ աշխատակիցր. հետեւեալ երկու հասնառու տողերով. « Le plus grand parmi les écrivains arméniens vivants ». Ճարտասամ էր և քաջ բնմասաց. տաղանդաւոր ուղեղ, և մեծ հրապարակասիւս. հմուտ հայ և յոյս պատմութեան, աշխարհագրութեան. մեծ հիշիկեարան, քաջ զազդիագէտ, յարտար անգղիագէտ և յետ փարիզու շոշակաւոր քիւրաքի՛ գերազանց դիւանագէտ մ'էր: Քիչ ապրիցաւ (24 տարի), բայց շատ աշխատեցաւ ազգին համար և ազգին համար մշտնջող Սահմատակուհեաց: Եւրոպան և Հնդկն ազգը մանցան գերեզման, բայց ուսումնայնք չմոռցան:

Հ. Ս. ԵՐԵՄ.



ԵՐԵՄՅԱՆԸ ՄԱՐԿԱՆԸ

Revue de Paris (4/9. 99). — Ռոսսը՝ ազատ ժողով փրայ. — Յօդուած կարդուս Ռուսացի, յորում նա կը ցուցնէ՝ որ Ռուսիա անխնայ գործունէութեամբ կ'աշխատի իւր անուշման կայսրութեան անքննելի ճնացած հեռուոր գաւառներն ալ օգտաւոր ընել: Կեղծունակն Ասիայ, Սիպերիայ մէջ հոկայ գործեր կատարելէն յետոյ, հիմա ալ հին աշխարհին ծայրը, Սառուցեալ Ափսիանոսին եղբոր կը դարձնէ այնպիսի դուր մը՝ որ սաւա զօրութեան ապագային համար ամենամեծ կարեւորութիւն ունի: Հիւսիսային հրաւանդանի և Սպիտակ ծովուն մէջ տեղ, Քուլայի թերակղզւոյն կամ ուսու Լառոնիոյ մէջ, պիտի յինէ նաւահանգիստ մը՝ որ ամէն եղանակաց մէջ առաջելի ըլլայ, և որ և է տարա տէրութեան ուսմբերուն ղեմ զօրուոր: Տեղագրական դրեց և Gulf - Stream քաղվ ջրոց պատճառաւ, Սկանտինաւիայ արեւմտեան եղբոր և անոր դիմաց Քուլայի թերակղզւոյն հիւսիսակողմ միշտ ազատ ճնացած են սառցանցներէ, և ծովն ալ Մշտն յինէ պէս ազատ է և բաց: Եւ հիշա այս տեղ պիտի շինուի նաւահանգիստն: Արշապի ալ երկիրս ամալի կ'երեւի, այսու հանդերձ ուրիշ տեսակէտով օգտաւած է վասն զի, եթէ սոսկ է որ տեղւոյն

հոգը մշակութեան անյարմար է, ծովը, Հիւսիսային հրաւանդանէն ղեպ 'ի Սպիտակ ծովուն բերանը, աշխարհիս ձկնալից դասիներէն մին է: Ռուսը՝ ամէն ջանք ի գործ կը ջնեն աշխարհիս այս անկեան մէջ գործելու:

Deutsche Revue (1/8. 99). — Դրովն և օրոյ ազգեցութիւնն՝ ասողութեան փրայ. — Տօքթ. E. Lindemann պատմական յառաջաբանով մը հրատարակեց յօդուած մը, յորում նա կ'ուսումնասիրէ կլիմայի վերաբերեալ տարիքը և անոնց առողջաբանական ազդեցութիւնը: Այս տարեաց զխաւսին է օրս որոյ մէջ առատապէս կը գտնուին թթուածին և մանուշանդ ոգոն. ծովային օդոյ առաւելութիւնն այն է՝ որ փոշի և մանրածններ չունի՝ եթէ մերձաւոր ցամաք երկրի ազգեցութիւնը չի կրեր: Ոգոյ խոնաւութիւնն, բարեխառնութիւնը և փոփոխութիւնք կարեւոր դեր կը խաղան յովային բաղանջոց շատերուն կլիման խառն է: յորում ցամաք երկրի հոգմոյն ազգեցութիւնը շատ զգալի կ'ըլլայ: Բուն ծովային կլիմայ քանի մը կզգնենուն մէջ միայն կը գտնուի (զոր օրինակ Հէլլադուն կզգնէ), յորս ծովային հովը գրեթէ միշտ կը տիրէ եւս միշտ մաքուր օդ կարելի է ծծել, որչափ ալ փոխուին հովերն:

Յօդուածագիրս կը վերջացնէ իւր ուսումնասիրութիւնը նկարագրելով ծովային օդոյ ազգեցութիւնը՝ մորթի, արեան շրջանին շնչառութեան և մարտդական գործողութեանց, ջրային զրութեան, և այլն, վրայ:

La Nouvelle Revue (15/9. 99). — Գերմանացիք խաշիտ մեղ. — Սոյն յօդուածով Söns կը հաւատանէ՝ որ գերմանական ճարտարուեստ վաճառք կամաց կամաց իտալիոյ մէջ կը տիրապետեն մեղմով: Եւ այս բանն կը կատարուի ռազմագիտական ճարտարութեան և ընդհատ կերպով: Ասոր պատճառն է նախ՝ միջնորդն, որ փութ է յաճախողները համոզելու և գերմանական վաճառուց գործածութեան վարժեցնելու զաննք, և ապա իտալացի վաճառականն՝ որ այդպէս պատրաստուած կը տեսնէ ճամբաները, կայանն միջնորդ եւուս հրապարակ վրայ՝ ի մէջ գերմանական ճարտարագործութեան և իտալական գործածութեան: Սակաւ ժամանակ յետոյ գերմանացի ճարտարագործն իւր աթոռը կը փոխադրէ իտալիոյ, և ապա կը հասնի հոն իրեն թիկունք՝ Գրամատուն, գերմանական զբամազութիւնը: որ թէ իտալացուց և թէ Գերմանացուց վարկը ունի: Վերջապէս Գերմանացին հասարակաց և ընդհանուր շահագործութեան մէջ մեծ մաս

ունի եւ այս կերպով իտալական հասարակաց կենաց կ'ընկերակցի: — Տնտեսական մաքաւման մէջ այս ամէնը մի մի սահմաններ են՝ որք յաշուրաբար կը գրաւեն իրենց սեփական տեղը:

Nuova Antologia (16/9. 99). — Լատին լիմերիկոյ մէջ իտալական գաղթականութեան տարածումը. — Հնարիկոյ Պարոնն է յօգուածագիր, որոյ յօգուածին բովանդակութիւնն այս է. Իտալացիք ընդհանրապէս Եւրոպայի Ձիւնացիները համարուած են, այսինքն՝ ողորմելիներ որք խեղճութեան պատճառաւ իրենց երրէն հալածեալք կ'երթան ամէն կողմը եւ դէրագին աշխատելով կը նուազեցնեն աշխատաւորաց վարձքը եւ այսպէս իրենց կը թըշնամացընեն դամէնքը: Բայց եթէ այս ենթադրութիւնն ճշմարիտ է Գաղղիոյ, Միացեալ Նահանգաց եւ մի քանի ուրիշ աշխարհաց մէջ, սակայն կան աշխարհներ ալ մասնաւոր Արեւելիներն է Պրագլիէ մէջ, յորս իտալացին ոչ է սոսկ գործաւոր, այլ ճարտարագործ, եւ այնչափ յաջողութիւն գտած է հոն՝ որ սպանիական կամ ըւստրոստական Ամերիկան գրեթէ փոխուելու վրայ է յիտալական Ամերիկա: Երեք միլիոն իտալացիք հիմա հաստատուած են Փլաշայի եղերքը, Պրագլիէ անտառաց մէջ, ի Պուէնոս Այրոս, Սան Փաւլոյ եւ զառնալու ամենեւին միտք չունին: Ասոնցմէ շատերն, նախ ձեռագէտք եւ այլք, որք կ'աշխատեն իրենց տերանց քով, հիմա իրենք եղած են երկրատէրք, տնկողք, վաճառականք, զբաղափոխք, ճարտարագետք եւ Անգղիացաց ի թրանսփառ կառարած դերը կը կատարեն հոս:



ԲԱՆԱՍԵՐ. — Նոստմիայ ցամախաւ. կամ համդէս:
Գիմն է 20 ֆր. — Հասցէ՝ M. BASMADJIAN.
(112. B-d. Rochecouart)

PARIS

ԲԻԻՐԱԿՆ. — Կը հրատարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ: Խմբ. Մ. Դաշթեան. — Գիմն է 12 ֆր.:

Հասցէ Direction du «Puragh» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

15 ՓԵՏՐՈՒԱՐ



ԱՆԳՂԻԱ

Անգղիոյ ԳՂԱՅԱՅ պատերազմն Պոնթերոսն հետ օրըստօրէ լաւը երեւոյթ ստացաւ: Վարէն, Պելլէրի, Քլէրի զօրապետք համաձայն կը պատերազմին: Եւստուարին վերջերք քիչ շատ յոյս առն Անգղիացիք երբ Սփինոս Քօփի տէրեց Վարէն, եւ Վուսկէյա Պօէր զօրավարն ծանր կերպով վիրաւորուեցաւ: Բայց այդ յոյսն ու ուրախութիւն շատ չտեսցաւ. — Վարէն քաշուեցաւ տիրած տեղերէն: — Վամպէրլէյն ինքզինքը սկսաւ պաշտպանել խօսարարին մէջ, ուր լուրջ կերպով կը խորհի Լորտերու Ժոզֆ Բարրոքիւր իրենց ներկայ վիճակն: Այսու հանգիստ, Անգղիա Ափրիկոյ մէջ ընկճուած եւ լքեալ զրից մէջ է, եւ կ'ուզէ հոն 200,000 զինուորաց բանակ մը կազմել: Տեսնենք բաղդը որ կողման պիտի նպաստէ:

ԳԱՂՂԻԱ

Գաղղիոյ ներքին վիճակն ըստ վարչութեան՝ յետին աստիճանի աղէտալի կընայ համարուի: — Վերջերս կրօնաւորաց կարգի (Assomptioniste) մը բարձումը վճեց, եւ Ժոզֆուրը ու կղեր յուզեց այս դատարկէքն: — Յուշահանդիսին գործն ալ յոյժ ձախարդ կ'երթայ. նաւակառոյց չէինքն մեծ մասն կործանեցաւ, եւ այս պատճառաւ պիտի յետաձգուի բացումը: Անգղիոյ պատերազմն Ափրիկոյ մէջ եթէ զուշարունակուի, մեծ փնտս պիտի հասնի դադարական ցուցահանդիսին: — Վաւտէք Ռուսոյ ճառախօսութեան մը մէջ ծանոյց՝ թէ արդի վարչութիւնն ի հարկէ պիտի պաշտպանէ զատարարագետութիւնն: Եւ վերոյշեալ կրօնաւորական կարգին բարձման առթիւ ալ նոյն վաւտէք Ռիշար Ժիրանուարին հետ թղթակցեցաւ. — այդ՝ ծանր խնդրոյ կերպարանք առաւ:

ԱՅԼԵԻԱՅԼ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ

ԱՍՍՏՐԻՈՆ եւ ՀՈՒՆԳԱՐԻՈՆ պաշտօնարարին մէջ խնդիրներ յուզուեցան տէրութեան հասարակաց ծախուց համար. — Կայսեր առջեւ ալ Քլարի կոմսն եւ այլ պաշտօնեայք խորհուրդ